**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«26» մարտի 2026թ. N 44-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 129-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի մարտի 9-ի N INS027-26 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի օգոստոսի 21-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 129-Ա հրամանի հավելվածը լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Ապրիլի 15,16 | 18:30 - 21:30 | «ISO 14001 Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց, քաղաքաշինության բնագավառում | Բիյան Ծովինար | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 10 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագ | 40.000 դրամ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | շրջակա միջավայրի կառավարման համակարգի ներդրման առանձնահատկությունները» վերապատրաստման դասընթաց | | | | եւտ 01-34 մասնագիտություններ | |

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3/26/2026

X

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ